ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության Կ-193-27.11.2017-ԱՍ-011/0 օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂ ՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 1, 6-րդ մաս	Առաջարկում եմ նախագծի 1-ին հոդվածի 6-րդ մասով առաջարկվող՝ «բարոյականության պաշտպանության նպատակով» հասկացությունը հստակեցնել:	Ընդունվել է ի գիտություն: Նախագծում տեղ գտած ձևակերպումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասին. «Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:»: Սահմանադրության նշված հոդվածի հիման վրա, ընտանեկան օրենսգրքի	Ընդունվել է

				գործող խմբագրության 11-րդ հոդվածը դիտարկում է ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող այնպիսի առողջական և բարոյական հետևյալ հանգամանքները՝ 1) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև. 2) որդեգրողների և որդեգրվածների միջև. 3) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ:	
2.	**Պատգամավոր**	Հոդված 1, 7-	Առաջարկում եմ նախագծի 1-ին	Առաջարկությունը ընդունվել	Ընդունվել է

	Հակոբ Հակոբյան	րդ մաս	հոդվածի 7-րդ մասով առաջարկվող՝ «երեխայի լավագույն շահ» հասկացությունը սահմանել ավելի համապարփակ:	է: ԱԺ պատգամավորի հետ քննարկման արդյունքում նախագիծը խմբագրվել է: «Երեխայի շահ» և լավագույն շահ» հասկացությունները նույնականացվել են:	
3.	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 22	Առաջարկում եմ նախագծի 22-րդ հոդվածով առաջարկվող օրենսգրքի 116-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասում օտարերկրյա քաղաքացիների համար դասընթացների կազմակերպումը նախատեսել իրականացնել՝ վճարովի հիմունքներով և կառավարության սահմանած կարգով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
4.	**Պատգամավոր** **Հակոբ Հակոբյան**	Հոդված 28	Առաջարկում եմ նախագծի 28-րդ հոդվածով առաջարկվող օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը հաստակեցնել:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագծի լրամշակման արդյունքում հոդվածը պահպանել է օրենսգրքում առկա գործող խմբագրությունը:	Ընդունվել է
5.	**Պատգամավոր**	Հոդված 24	Առաջարկում եմ նախագծի 24-րդ հոդվածով առաջարկվող՝ գործող	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է,	Ընդունվել է

	Հակոբ Հակոբյան		օրենսգրքի 118-րդ հոդվածում նախատեսված 1-ին մասի և 2-րդ մասի առաջին նախադասությունները համապատասխանեցնել իրար հետ:	նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	
6.	**Պատգամավոր** **Հակոբ Հակոբյան**	Հոդված 29	Առաջարկում եմ նախագծի 29-րդ հոդվածով առաջարկվող՝ գործող օրենսգրքի 128-րդ հոդվածում նախատեսված 3-րդ մասում հստակեցնել «ապաանձնավորված» հասկացությունը և նախատեսել դրա մեխանիզմները:	Ընդունվել է, տեղեկատվության ապանձնավորված կերպով տրամադրման հասկացությունը ձևակերպված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում: Միաժամանակ, ԱԺ պատգամավորի հետ քննարկման արդյունքում նախագծում լրացվել է առ այն, որ տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:	Ընդունվել է
7.	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 30	Առաջարկում եմ նախագծի 30-րդ հոդվածով առաջարկվող՝ գործող	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը	Ընդունվել է

			օրենսգրքում լրացվող 128.1-րդ հոդվածում 1-ին և 11-րդ մասերը համապատասխանեցնել:	համապատասխանաբար լրամշակվել է: 1-ին և 11-րդ մասերը միավորվել և շարադրվել են նոր խմբագրությամբ:/Տես մաս 1/	
8.	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 35	Առաջարկում եմ նախագծի 35-րդ հոդվածով առաջարկվող՝ գործող օրենսգրքում խմբագրվող 137.1-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Խնամատարության պայմանագրի օրինակելի ձևը սահմանում է ՀՀ կառավարությունը»:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
11.	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 35	Առաջարկում եմ նախագծի 35-րդ հոդվածով առաջարկվող գործող օրենսգրքի 137.1-րդ հոդվածի 1-ին մասը և 138.1-րդ հոդվածի 3-րդ մասը միացնել և խմբագրել:	Ընդունվել է, Նախագծի լրամշակման արդյունքում նախագծից հանվել է 138.1-րդ հոդվածի 3-րդ մասը, քանի որ 137 հոդվածի 1-ին մասում համապատասխան կարգավորումը ներառված է:	Ընդունվել է
12.	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 35	Առաջարկում եմ նախագծի 35-րդ հոդվածով առաջարկվող՝ գործող օրենսգրքում խմբագրվող 140-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է

			չեն կարող պակաս լինել մեկ երեխայի համար նախատեսված՝ պետության հոգածության կենտրոններում երեխաների շուրջօրյա խնամքի և դաստիարակության համար գումարի չափից:»:		
27.	**Պատգամավոր Վարդևան Գրիգորյան**	Օրենսգրքի հոդված 46 (նախագծի հոդված 6)	Հոդված 46-ը հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մինչև երեխայի տասը տարին լրանալը նրա ծնողների համատեղ, իսկ ծնողներից մեկի մահացած լինելու դեպքում՝ մեկ ծնողի դիմումի հիման վրա, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները փոխում են երեխայի անունը, ինչպես նաև նրան տրված ազգանունը՝ մյուս ծնողի ազգանունով»:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
29.	**Պատգամավոր** **Հայկ Բաբուխանյան**	Հոդված 1	Նախագծի հոդված 1-ի 7-րդ մասից հանել «լավագույն», «կամ կրոնական», «եւ այլ կարիքները եւ պահանջները» բառերը:	Ընդունվել է ի մասնակի: ԱԺ պատգամավորի հետ քննարկման արդյունքում նախագիծը խմբագրվել է՝	Ընդունվել է

				հաշվի առնելով նաև ԱԺ պատգամավորներ Հակոբ Հակոբյանի և Ջեմմա Բաղդասարյանի առաջարկությունները:	
30.	**Պատգամավոր** **Հայկ Բաբուխանյան**	Հոդված 10	Նախագծի հոդված 10-ի հոդվածի 8-րդ կետի բ.) ենթակետի սկզբից ավելացնել «պարբերաբար» բառը,	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
31.	**Պատգամավոր** **Հայկ Բաբուխանյան**	Հոդված 11	Նախագծի հոդված 11-ի 1-ին մասի գ.) ենթակետում «այն» բառից հետո ավելացնել «պետական կամ տեղական ինքնակառավարման» բառերը: Նույն հոդվածի 2-րդ մասի «սահմանված» բառից հետո ավելացնել «անառարկելի» բառը:	Ընդունվել է մասամբ: Նախագիծը լրացվել է «պետական կամ տեղական ինքնակառավարման» բառերով: «Անառարկելի» հասկացություն խնդրահարույց է իրավական որոշակիության տեսանկյունից:	Ընդունվել է
32	**Պատգամավոր**	Հոդված 20	Նախագծի հոդված 20-ի առաջին մասը հանել:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է,	Ընդունվել է

.	**Հայկ Բաբուխանյան**			նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է՝ ԱԺ պատգամավորների հետ քննարկման արդյունքում:	
33.	**Պատգամավոր** **Հայկ Բաբուխանյան**	Հոդված 22	Հոդված 22-ի 2-րդ մասից հանել «6-րդ» բառերը: Եվ համապատասխանաբար հանել 6-րդ մասը:	Ընդունվել է մասամբ: Հոդվածը վերախմբագրվել է՝ հաշվի առնելով Հակոբ Հակոբյանի առաջարկությունները (տես՛ ամփոփաթերթի առաջարկ 3-ը): Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրարերկրացիների կողմից որդեգրման վերաբերյալ եզրակացություն պետք է տրամադրի ՀՀ կառավարության կողմից սահմանված Կենտրոնական մարմինը, նախագծի 21-րդ հոդվածում լրացվել է համապատասխան դրույթ, որ այդ դեպքերում գործերի	Ընդունվել է

				դատական քննությանը մասնակցում է ոչ թե խնամակալության և հոգաբարձության մարմինը, այլ Կենտրոնական մարմնի ներկայացուցիչը:	
34.	**Պատգամավոր Հայկ Բաբուխանյան**	Հոդված 24	Նախագծի հոդված 24-ում պահպանել աչափահաս ծնողների երեխաներին որգեդրելու կարգը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
35.	**Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան**	Օրենսգրքի 41,42,54,56,57,62,111,113,116,120,132,137 հոդվածներ	1.Նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ կետում, 42-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասում, 54-րդ հոդվածի 3-րդ կետում, 56-րդ հոդվածի 3-րդ կետում, 57-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասում, 62-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասում, 111-րդ հոդվածի 1-ին կետի 1.2 ենթակետում, 113-րդ հոդվածի 2-րդ կետում, 116-րդ հոդվածի 3-րդ կետում, 120-րդ հոդվածի 2-րդ կետում, 132-րդ հոդվածի 1-ին կետում, 137-րդ հոդվածի 7-րդից 9-րդ կետերում	Ընդունվել է : Նախագծում «երեխայի շահ» և «երեխայի լավագույն շահ» հասկացությունները նույնացվել են: /Տես՝ նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետ/ Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նախագում օգտագործվում միջազգայնորեն ընդունված և Հայաստանի	Ընդունվել է

			«երեխայի շահեր» բառերը փոխարինել «Երեխայի լավագույն շահեր» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:	Հանրապետության կողմից ստանձնած կոնվենցիոն պարտավորություններով ամրագրված «երեխայի լավագույն շահեր հասկացությունը», Հայաստանի Հանրապետության Սահմանդրությամբ ամրագրված կենսական շահ և շահեր հասկացությունը, որոնք յուրաքանչյուր դեպքում մեկնաբանելով յուրովի՝ հաշվի առնելով կարգավորման առարկան:	
	Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան	Օրենսգրքի 42-րդ հոդված	2. Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին կետի «ազդում» բառը փոխարինել «սահմանափակում» բառով:	2. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան	Հոդված 24	3.Պահպանել գործող օրենսգրքի 118-րդ հոդվածի այն դրույթը, որը վերաբերվում է անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս	3. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար	

			նաև նրանց ծնողների կամ խնամակալների համաձայնությանը:	լրամշակվել է:	
	Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան	Օրենսգրքի 55, 109,100 հոդվածներ	4.Նախագծի 54-րդ հոդվածի 4-րդ կետում, 109-րդ հոդվածի 1-ին կետում, 110-րդ հոդվածի 2-րդ կետում «ազգաբնակչություն» բառը փոխարինել «բնակչություն» բառով, համապատասխանեցնելով այն 136-րդ հոդվածի 1-ին կետում կատարված ուղղմանը:	4.Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան	Օրենսգրքի 55-րդ հոդված	5. Օրենսգրքի 55-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Խորթ երեխաներին դաստիարակելու և խնամելու՝ խորթ ծնողների իրավունքները և պարտականությունները	5. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է

	Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան	Օրենսգրքի 55-րդ հոդված	6. Նախագծի 55-րդ հոդվածի «Խորթ ծնողները» բառերից հետո լրացնել «իրավունք ունեն և» բառերով, համապատասխանեցնելով այն ՀՀ Սահմանադրության 36-րդ և նախագծի 51-րդ հոդվածներին:	6. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	
	Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան	Օրենսգրքի 109 հոդված	7. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-րդ կետի «ծնողներին անգործունակ» բառերից հետո լրացնել «կամ անհայտ բացակայող» բառերով:	7. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Պատգամավոր Ջեմմա Բաղդասարյան	Հոդված 35	8. Նախագծի 35-րդ հոդվածով լրացվող 137.1 հոդվածի 5-րդ կետի «ապրուստ» բառը փոխարինել «խնամք» բառով:	8. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 5	**Նախագծի Հոդված 5-ով լրացվող** Օրենսգրքի 44-րդ հոդվածի 1.1 կետում սահմանել դրույթ առ այն, որ Երեխայի	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է

			կարծիքը լսելիս իրավասու մարմինը օրենքով նախատեսված դեպքերում է ներգրավում է մանկական հոգեբան կամ մանկավարժ կամ սոցիալական աշխատող:		
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 9	Նախածի 9-րդ հոդվածը հանել, քանի որ նշված հոդվածը նախագծում ներառվել է վրիպակի հետևանքով: Պահպանել օրենսգրքի 58-րդ հոդվածի նախկին խմբագրությունը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է

	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 22	Նախագծի 22-րդ հոդվածով շարադրվող օրենսգրքի 116-րդ հոդվածով Նախապատրաստական դասընթացների մասնակցությունը բացառություն նախատեսել այն անձանց համար՝ ովքեր երեխային որդեգրում են ծնողի գրավոր համաձայնության հիման վրա:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 28	Նախածի 28-րդ հոդվածը հանել, պահպանել օրենսգրքի 124-րդ հոդվածի նախկին խմբագրությունը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է

	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 34	Նախագծի 34-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 138-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան որդեգրվում է որդեգրելու նախապատվության իրավունք ունեցող անձանց կողմից» բառերը, քանի որ նշված բառերը ներառվել են վրիպակի արդյունքում և հոդվածին վերաբերելի չեն:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 34	Նախագծի 34-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 138.1-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի» բառերը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագիծ	Նախագիծը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար	Ընդունվել է

				լրամշակվել է:	
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 21	Նախագծի 21-րդ հոդվածում և քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարվող փոփոխությունները խմբագրել՝ սահմանելով, որ օտարերկրացիների կողմից ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների որդեգրման վերաբերյալ դատական գործերին պարտադիր մասնակցում է ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի ներկայացուցիչը,: Բացի դրանից նույն հոդվածում սահմանել, որ նշված գործերով երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի վարույթի կարճման կամ երեխայի որդեգրումը մերժելու մասին վճիռ կայացնելու դեպքում, դատարանը պարտավոր է վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այն	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է

			ուղարկել գործին մասնակցող անձանց, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին, իսկ օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի որդեգրելու դեպքում նաև կենտրոնական մարմնին:		
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Հոդված 36**	Նախագծի 36-րդ հոդվածում սահմանել օրենքի ուժի մեջ մտնելու իրատեսական ժամկետներ՝ հաշվի առնելով նոր կարգավորումների գործնական կիրառման հետ կապված խնդիրները:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 1	Հոդված 1-ով լրացվող 178.1 հոդվածը տարածել նաև խնամատար ընտանիքում գտնվող երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության իրականացմանը	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է

			խոչընդոտելու դեպքերի վրա:		
	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 22	Սահմանել դրույթ առ այն, որ Նախապատրաստական դասընթացների մասնակցությունը պարտադիր չէ այն անձանց համար՝ ովքեր երեխային որդեգրում են ծնողի գրավոր համաձայնության հիման վրա:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է